ევროკავშირი
საქართველოსთვის
ENPARD

Հրաբխային խարամի արդյունահանումը Օկամիում

Դավիթ Գվարջիլաձեն «Մերիդիանի 2006» ՍՊԸ-ի տնօրենն է: ՍՊԸ-ն Ախալքալաքի մունիցիպալիտետի Օկամ գյուղի շրջակա տարածքում հրաբխային ծագման խարամի («պեմզա») հանքավայր է տնօրինում եւ լիցենզիայով մոտավորապես 400 հազար խորհանարդ մետր հանքանյութի արդյունահանման իրավունք ունի: Հանքավայրը տեղակայված է մոտ 8 հեկտար տարածության վրա:
Խարմը կիրառվում է շինարարական բլոկներ պատրաստելու համար, որը ջերմամեկուսացման բնական միջոց է: Խարմը ունի նաեւ հակահրդեհային էֆեկտ, այդ պատճառով հարկերի միջեւ բետոնի ծածկի տակ հաճախ են տեղադրում: Հակահրդեհային էֆեկտից բացի այն մեկուսացման լավագույն միջոց է: Ընկերության ներկայացուցիչները ասում են, չնայած հրաբխային ծագման, ճառագայթման տեսանկյունից հետազոտվել է եւ ոչ մի վտանգ չի ներկայացնում իրենից: Վերջին ժամանակաշրջանում «պեմզան» տեղական շուկայում դառնում է պահանջարկային: Ըստ նրանց, Օկամի հանքավայրում արդյունահանված խարմը բավականին թեթեւ է, ինչը պահանջարկ է ստեղծում հատկապես այն դեվելոպերային ընկերություններում, որոնք բարձրահարկ շենքեր են կառուցում:

Նախագծի արդյունքում զբաղվեց՝4 տեղացի
Նախագծի ընդհանուր բյուջեն՝ 174.050.00 լարի
Եվրամիության ֆինանսավորումը՝ 103.147.38 լարի
Համաֆինանսավորումը՝ 70.902.62 լարի



«Մերիդիանը 2006» շրջանում հզոր եւ առաջատար ձեռնարկություններից մեկն է, սակայն ժամանակակից չափանիշները անհրաժեշտ է մշտապես թարմացնել եւ զարգացնել, ինչը հավելյալ ծախսերի հետ է կապված: Ընկերությունը մասնակցեց դրամաշնորհային մրցույթին եւ Եվրամիության կողմից ձեռք բերեց ֆինանսավորում:

«Ձեռք բերեցինք անվավոր բեռնաթափիչ, ինչը շատ հեշտացրեց ամենօրյա աշխատանքը եւ արտադրության չափն էլ կրկնապատկվեց: Մենք հիմնականում դաշտային պայմաններում ենք աշխատում եւ անհարժեշտ էր կահավորված բնակատեղի: Դրմաշնորհի գումարով ձեռք բերեցինք դաշտային-գրասենյակային կոնտեյներ եւ վերահսկիչ տեսախցիկներ:

Այս հարցում Եվրամիությունը ոչ միայն գումարով, այլ նաեւ սեփական փորձով եւ փորձաքննությամբ օգնեց: Որպես էլեկտրաէներգիայի աղբյուր առաջարկեցին արեւի մարտկոցներ եւ քամու գեներատորներ, որը ապահովում է էլեկտրաէներգիայի հաղորդումը եւ նվազեցնում է ազդեցությունը շրջակա միջավայրի վրա», - Ասում է Դավիթ Գվարջիլաձեն:

Ընկերության կողմից միջավայրի մասին հոգատարությունը միայն սրանով չի եզրափակվում: ՍՊԸ-ի տարծքում տեղադրվեց հատուկ աղբարկղեր, որտեղ ամեն օր հավաքվում է առանձնացված թափոնները:

«Մեր ընկերությունը նշանավոր ներդրում է անում ոչ միայն տեղական այլ նաեւ կենտրոնական բյուջեում: Դրանից բացի ընկերությունը աշխատանքի է ընդունել 15 տեղացի եւ նրանց թիվը մոտ ապազայում էլ ավելի կավելանա: Շնորհակալություն եմ ուզում հայտնել Եվրամիությանը GIPA-ին եւ LAG-ին: Նրանք տեսան մեր ընկերության հնարավորությունները եւ տվին զարգանալու հնարավորություն», - ասաց ընկերության տնօրենը:

Նախաձեռնությունը ֆինանսավորվել է ,Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեւանական նախագծի՝ (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումըե նախագծի շրջանակներում:

Նախագիծը իրագործում է Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտը, գյուղատնտեսության եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA): Նախագծի համագործակիցներն են Մերսի Քորփսը, ELVA հասարակական ներգրավվածությունը եւ արեւմտյան Կորկի զարգացման գործընկերությունը:

Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով՝ 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպաստումը, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն է գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը՝ www.enpard.ge.